

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ /ՄՈՂՈՒԼ 2/**

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՍԲԻՈՆ	ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՍԲԻՈՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՂՈՒԼ	ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ /ՄՈՂՈՒԼ 2/
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ ԵՎ ՄՈՂՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ	1610B1/01.2, 2 ՄՈՂՈՒԼ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՄՅԱԿ	1-ին կուրս, 2-րդ կիսամյակ
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	<ul style="list-style-type: none"> • Հիմնարար գիտելիքներ տալ Հայոց պատմության նարագույն շրջանի վերաբերյալ: • Ամրապնդել հարգանք և հպարտություն հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ: • Հայաստանի երեք հանրապետությունների պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ ձեռնարկել այն գիտակցությունը, որ ազգի հարատևման հիմնական պայմանը պետականության անհրաժեշտությունն է: • Նպաստել Հայաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման հեռանկարների վերաբերյալ ամբողջական պատկերացման ձեռնարկում: • Նպաստել նորագույն շրջանի հայկական մշակույթի զարգացումը եւ առանձնահատկությունները պայմանավորող պատմական պայմանների իմացությանը:
ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԴՐՅՈՒՆՔՆԵՐԸ	<p>ԳԻՏԵԼԻՔ</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել Հայաստանի առաջին հանրապետության հռչակման նախադրյալները: • Բացատրել ՀՀ ներքին ու արտաքին հիմնախնդիրները • Ներկայացնել խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում հայտնված ՀՀ ծանր դրությունը, ՀՀ անկման պատճառներն ու անկումը • Բացատրել Հայաստանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները խորհրդային իշխանության տարիներին • Ներկայացնել հայ ժողովրդի ներդրումը ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում • Բացատրել ԽՍՀՄ փլուզման եւ Հայաստանի երրորդ հանրապետության պետականության կայացման գործընթացը: • Ներկայացնել ՀՀ ներքին ու արտաքին դրությունը, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: <p>ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ</p> <ul style="list-style-type: none"> • Քննել ՀՀ ներքին ու արտաքին հիմնախնդիրները, Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքականության «Անկախ եւ Միացյալ Հայաստանի

	<p>սկզբունքը»:</p> <ul style="list-style-type: none"> • Համեմատել Բաթումի, Բրեստ-Լիտովսկի, Ալեքսանդրապոլի ու Մերի պայմանագրերը: • Վերլուծել Հայաստանի առաջին հանրապետության անկման պատճառները: • Հիմնավորել Հայաստանի խորհրդայնացման անխուսափելիությունը: • Համեմատել եւ վերլուծել տնտեսության բնագավառում խորհրդային իշխանության իրականացրած ռազմական կոմունիզմի, նեպ-ի, արդյունաբերության ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման եւ կուլտուրական հեղափոխության ծրագրերը: • Վերլուծել Հայաստանի սահմանների վերաբերյալ Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը: • Վերլուծել տնտեսության պետական կարգավորման, պլանավորման, խորհրդային հանրապետությունների տնտեսական ինքնուրույնությունն էապես սահմանափակելու, տեղական զարգացման առանձնահատկությունները հաշվի չառնելու բացասական հետեւանքները: • Վերլուծել ԽՍՀՄ փլուզման հիմնական պատճառները: • Վերլուծել Հայաստանի երրորդ հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, հաջողություններն ու բացթողումները: • Վերլուծել Արցախյան շարժման պատճառները, գնահատել միջազգային կառույցների դերը հիմնախնդրի կարգավորման գործում: <p>ՀՄՏՈՒԹՅՈՒՆ</p> <ul style="list-style-type: none"> • Հայոց պատմության ուսուցանվող ժամանակաշրջանի վերաբերյալ հիմնարար գիտելիքների տիրապետում: • Ազգային-պետական մտածողություն: • Ներկյան եւ ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերի գիտակցում:
--	---

<p>ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ</p>	<ul style="list-style-type: none"> • ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 2 • ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԺԱՄ - 16 • ԴԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ - 8 • ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 8 • ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ - 2
--	--

<p>ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ</p>	<p>Հայոց պատմության հին, միջին եւ նոր շրջանի բուհական դասընթացի իմացություն, հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներին համապատասխան նորագույն շրջանի իմացություն</p>
----------------------	--

<p>ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ</p>	<ul style="list-style-type: none"> • Դասախոսություն • Զրույց • Բանավեճ • Սեմինար պարապմունքներ • Աշխատանք սկզբնաղբյուրների հետ • Զննական մեթոդներ /քարտեզների ուսումնասիրություն, աշխատանք ուրվագծային քարտեզներով եւ այլն
--	--

<p>ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</p>	<ol style="list-style-type: none"> 1. Հայաստանի Հանրապետություն /1918-1920/ <ol style="list-style-type: none"> 1.1 Հայկական պետության կերտումը 1.2 Ներքին դրությունը 1.3 ՀՀ արտաքին դրությունը 1.4 Հանրապետության անկումը
--	---

	<ol style="list-style-type: none"> 2. Հայաստանը 1920-40-ական թթ <ol style="list-style-type: none"> 2.1 Խորհրդային իշխանության մարմինների ձեւավորումը 2.2 «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառումը եւ դրա հետեւանքները 2.3 1921թ փետրվարյան ապստամբությունը Հայաստանում, պարտությունը եւ խորհրդային իշխանության վերահաստատումը: Անցումը Նոր տնտեսական քաղաքականության 2.4 Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները 2.5 Խորհրդային Հայաստանի ինդուստրացումն ու գյուղատնտեսության կոլեկտիվացումը 3. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: 4. Հայաստանի խորհրդային հանրապետությունը հետպատերազմյան շրջանում /1945-85/ 5. Արցախյան շարժումը /1988-1994/ 6. Հայաստանի Հանրապետությունը 1991-2015թթ <ol style="list-style-type: none"> 6.1 Անկախության հռչակումը եւ պետականության կայացման գործընթացը: 6.2 Հանրապետության ներքին դրությունը 6.3 Հանրապետության միջազգային դրությունը եւ արտաքին քաղաքականությունը 7. Մշակութային ձեռքբերումները նորագույն շրջանում
--	---


<p style="text-align: center;">ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p> <p style="text-align: center;">ՀԻՄՆԱԿԱՆ</p>	<ol style="list-style-type: none"> 1. Հայոց պատմություն (դասախոսությունների փաթեթ) 2. Հայոց պատմություն, Հր. Միմոնյանի խմբագրությամբ, Երևան, 2000: 3. Հայոց պատմություն, հ. IV. Նորագույն ժամանակաշրջան, գիրք առաջին (1918-1945 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, "Զանգակ-97" հրատարակչություն, 2010, 800 էջ + 24 ներդիր:
--	--

<p style="text-align: center;">ԼՐԱՑՈՒՑԻՉ</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ռ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 2005 2. Հայկական հարց, Երևան, 1996 3.
---	---

<p style="text-align: center;">ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ</p>	<p>Ամփոփիչ ստուգում /թեսթ/: Յուրաքանչյուրը 100 միավոր առավելագույն արժեքով: Թեսթը կազմված է 60 հարցից՝ 20-ը՝ 1, 40-ը՝ 2 միավոր արժեքով:</p>
--	---

<p style="text-align: center;">ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴԴԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ</p>	<ol style="list-style-type: none"> 1. Բաղադրիչ 1 - հաճախումներ 10 % 2. Բաղադրիչ 2 - ընթացիկ ակտիվություն 20% 3. Բաղադրիչ 3 - ամփոփիչ ստուգում 70%
---	--

<p style="text-align: center;">ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ</p>	<table border="1"> <thead> <tr> <th>Գնահատման թվային միավորը</th> <th>Տառային գնահատական</th> <th>Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>96-100</td> <td>A+</td> <td>5+</td> </tr> <tr> <td>91-95</td> <td>A</td> <td>5</td> </tr> <tr> <td>86-90</td> <td>A₋</td> <td>5-</td> </tr> <tr> <td>81-85</td> <td>B+</td> <td>4+</td> </tr> </tbody> </table>	Գնահատման թվային միավորը	Տառային գնահատական	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը	96-100	A+	5+	91-95	A	5	86-90	A ₋	5-	81-85	B+	4+
Գնահատման թվային միավորը	Տառային գնահատական	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը														
96-100	A+	5+														
91-95	A	5														
86-90	A ₋	5-														
81-85	B+	4+														



76-80	B	4
71-75	B ₋	4-
66-70	C ₊	3+
61-65	C	3
40-60	C ₋	3-
Uñisly 39	D	2

Ուսանողի ծանրաբեռնվածության աշխատաժամանակը կրեդիտ/կրեդիտ ժամ-2/60

Հ/Հ	Թ ե մ ա	Լսարանային ժամեր					Ուսանողի ինքնուրույն աշխատաժամանակը	Ուսանողի ընդհանուր աշխատաժամանակը
		Գրասալիստություն	Գործնական	Լաբորատոր	Սեմինար	Ուս. պրակտիկա		
1.	Հայաստանի Հանրապետություն /1918-1920/ /Հայկական պետության կերտումը, ներքին դրությունը/	2					3	5
2.	Հայաստանի հանրապետության արտաքին դրությունը: Հանրապետության անկումը				2		5	7
3.	Հայաստանը 1920-40-ական թթ	2					3	5
4.	Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Հայաստանի խորհրդային հանրապետությունը հետպատերազմյան շրջանում /1945-85/				2		5	7
5.	Արցախյան շարժումը /1988-1994/	2					3	5
6.	Հայաստանի Հանրապետությունը 1991-2014թթ /Անկախության հռչակումը եւ պետականության կայացման գործընթացը: Հանրապետության ներքին դրությունը/	2					3	5
7.	Հանրապետության միջազգային դրությունը եւ արտաքին քաղաքականությունը		2				5	7
8.	Մշակութային ձեռքբերումները նորագույն շրջանում		2				5	7
Ամփոփիչ ստուգում								12
Ընդամենը								60